ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

23 նոյեմբերի հինգշաբթի 2022
տպագրության ԺԱ տարի

168
(2648)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱԲԵԼ Է. ՄԱՍ 140

«Մենք խոստացել ենք, որ պետական բյուջեի եկամուտները 1-2 տարվա ընթացքում կմեծացնենք ու կդարձնենք 35-40 տոկոս: Այդ խոստումն ի կատար է ածվել. ամենաթարմ տվյալներով՝ մենք 2022 թվականի արդյունքներով՝ 2018 թվականի նկատմամբ պետական բյուջեի եկամտային մասն ավելացնում ենք շուրջ 578 մլրդ դրամով, որը շուրջ 43 տոկոս է»: Այս մասին հոկտեմբերի 29-ին տեղի ունեցած «Քաղաքացիական Պայմանագիր» կուսակցության համագումարի ժամանակ հայտարարեց Նիկոլ Փաշինյանը: Հենց այստեղ էլ թաքնված է Նիկոլ Փաշինյանի հերթական սուտը: Ուշադրություն դարձրեք, որ իր խոսքերում նա նշում է 1-2 տարվա ընթացքում իր խոստումն ի կատար ածելու մասին, սակայն որպես ժամանակահատված համեմատում է 2022 թվականը 2018-ի հետ, որն արդեն չորս տարի է անում: Այսինքն՝ նրա խոստումը կատարվել է ավելի երկար ժամանակահատվածում, քան իրենք խոստացել էին: Նրանք խոստացել էին բյուջեի եկամուտները 35-40 տոկոսով ավելացնել 1-2 տարում, ավելացրել են 4-5 տարում: Եվ սա էլ իր հերթին վկայում է, որ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը հերթական անգամ խաբել է ՀՀ հպարտ եւ արժանապատիվ քաղաքացիներին եւ ներկայացրել փաստեր, որոնք իրականությանը չեն համապատասխանում եւ կրում են մանիպուլատիվ բնույթ:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ ՀՀ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը արդեն դիմում է ներկայացրել ՀՀ Ազգային անվտանգության ծառայությանը, որպեսզի նրանց օպերատիվ հետախուզական խումբը ստուգի բոլոր պետական պաշտոնյաների գույքը եւ պարզի, օրինակ՝ նրանք ունե՞ն արդյոք բիզնես, անշարժ կամ շարժական գույք, որը չեն հայտարարագրել, կամ արդյո՞ք վարում են մի մեքենա, որը հայտարարագրում ներկայացված չէ: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը տվել է մեծ թվով պետական պաշտոնյաների անուններ՝ ՀՀ վարչապետ, փոխվարչապետեր, ՀՀ նախագահ, ԱԺ նախագահ, պատգամավորներ եւ այսպես շարունակ: Մենք կհետեւենք զարգացումներին՝ պարզելու, թե իրավապահների ստուգումները ինչ արդյունքներ կտան: Արդյո՞ք դրանք կլինեն իրական, թե՞ հետապնդումների հարմար առիթ: Հիշեցնենք՝ «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ ՀՀ պետական պաշտոնյաներն այս օրերին ծանուցումներ են ստանում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից: Ծանուցման մեջ հանձնաժողովը կոնկրետ հարցադրումներ է արել պետական պաշտոնյաներին եւ պահանջել հայտնել, թե այս կամ այն բիզնեսի, գույքի կառավարման հետ ինչ առնչություն ունեն պաշտոնյաները: Չի բացառվում՝ սկսվեն նաեւ զանգվածային գաղտնալսումներ պաշտոնյաների գործունեությունը բացահայտելու ուղղությամբ:

Ա եւ ամպեր են կուտակվում ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության պետ Սերգեյ Ատոմյանի գլխին: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ ուժային կառույցները ՔԿՀ-ներում տիրող իրավիճակի մասով օպերատիվ տեղեկություններ են ստացել , որի մասով սկսվել է գործընթաց: Բացի այդ՝ քաղաքական իշխանություններն են Ծառայության պետի գործունեության մասով բացասական գնահատական տվել, ուստի չի բացառվում ՔՊ նախկին պատգամավոր Սերգեյ Ատոմյանը հրաժեշտ տա իր պաշտոնին: Կամ նման հեռանկար, «Ժողովուրդ» օրաթերթի այս հարցին ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության հանրային կապերի բաժնի պետ Նոնա Նովիկյանը հայտնեց, թե իրականությանը չի համապատասխանում լուրը: Կսպասենք իրադարձությունների զարգացմանը:

Արցախում իրականացվող շինարարական աշխատանքների համար պետական գերատեսչությունների կողմից հայտարարված մրցույթներում մեծամասամբ «Կապավոր» ՍՊԸ-ն է հաղթում: Ու դա կարելի է պնդել անգամ՝ ուսումնասիրելով ընկերության Facebook-ի պաշտոնական էջը, ու ամեն ինչ պարզ կլինի: Սոցիալական ցանցում տեղադրած տեղեկությունից էլ հստակ է՝ ընկերությունն է շահում պետության կողմից հայտարարվող բազմաթիվ մրցույթներն ու ինքն իրականացնում թե՛ ճանապարհների, թե՛ բնակարանների ու առանձնատների կառուցումը, թե՛ անգամ ձնամաքրման աշխատանքները: Որպես օրինակ նշենք, որ Արցախի Աստղաշեն գյուղի հարեւանությամբ կառուցվող նոր բնակավայրի կամ քաղաքաշինության նախարարության համաֆինանսավորմամբ Ասկերանի շրջանի Հովսեփավան համայնքում 92 առանձնատների կառուցումը, ինչպես նաեւ պետական ֆինանսավորմամբ Ստեփանակերտի փողոցների բարեկարգումը, Արցախում ու Հայաստանում ճանապարհների շինարարությունն ու բազմաթիվ այլ աշխատանքների իրականացնողը հենց Արման Հակոբջանյանին պատկանող «Կապավոր» ՍՊԸ-ն է: Նա ՍՊԸ-ի տնօրենների խորհրդի նախագահ է, որին, չգիտես ինչպես, հաջողվում է շահել Արցախի կառավարության կողմից ֆինանսավորվող գրեթե բոլոր շինաշխատանքներն ու ըստ այդմ մեծ գումարներ տնօրինել: Իսկ գումարների չափերն այնպիսի մեծության են, որ նա կարողանում է նաեւ, օրինակ, Սեւանի ափին շքեղ առանձնատուն կառուցել:

ԱՐՁԱԳԱՆՔ

ԻՆՉՆ Է ԳՆԱՃԻ ՊԱՏՃԱՌԸ

«Հայաստան» խմբակցության ղեկավար Թադեւոս Ավետիսյանը «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում ահազանգող գնաճը բացատրում է Հայաստանում պարենի ու գյուղատնտեսական ապրանքների նվազմամբ: Սրան զուգահեռ՝ հավելում է՝ հատկապես Ռուսաստանի բաղադրիչների անհնախաղեղ հոսքի հետ կապված է նաեւ աղրանքների նկատմամբ պահանջարկն ավելացել, ինչը նույնպես գնաճը խթանող հանգամանք է: Թեեւ նկատել է, որ Կենտրոնական բանկը որոշակիորեն պայքարում է գնաճի դեմ, բայց վստահ է՝ կառույցն իր ունեցած գործիքակազմն ամբողջությամբ չի կիրառում: Հետեւաբար՝ գնաճը զսպելու համար կոնկրետ անելիքներ ոչ միայն ԿԲ-ն, այլ նաեւ կառավարական կաբինետում ունեն:

-Պարոն Ավետիսյան, դրամը Հայաստանում արժեւորվում է, իսկ դոլարը արժեզրկվում, բայց առաջին անհրաժեշտության ապրանքները շարունակում են թանկանալ, իհարկե, այս ամենը կարող է բացատրվել Հայաստան եկող զբոսաշրջիկների թվով, սակայն տեսակետ կա, որ պատկան մարմինները չեն կիրառում համապատասխան գործոններ. այս գնաճը զսպելու համար, ո՞րն է Ձեր մեկնաբանությունը:

-Գնաճը ոչ թե ֆինանսական կամ դրամական երեւույթ է, այլ նաեւ պայմանավորված է երկրի տնտեսության ներուժով: Առաջինը, եթե մեր երկրի տնտեսությունը նվազում է եւ սննդամթերքի առաջնային անհրաժեշտության պարենի առաջարկը նվազում է, բնականաբար բերում է գնաճի: Երկրորդը, պարենային ապրանքների հետ կապված մեր երկրում պահանջարկը ավելացել է: Երրորդ կարեւոր գործոնը, որը եւս օբյեկտիվ է, դա կապված է միջազգային շուկաներում պարենային ապրանքների թանկացմամբ: Սրանք այն հիմնական գործոններն են, որ բերում են պարենային մթերքի գնաճի: Մեր երկրում ավելի արագ են աճում սննդամթերքի գները, հատկապես առաջին անհրաժեշտության: Հիմնականում Կենտրոնական բանկը թեեւ որոշակիորեն պայքարում է գնաճի դեմ, բայց կառույցն իր ունեցած գործիքակազմն ամբողջությամբ չի կիրառում: Հետեւաբար՝գնաճը զսպելու համար կոնկրետ անելիքներ ոչ միայն ԿԲ-ն, այլ նաեւ կառավարական կաբինետն ունի:

-Ի՞նչ պետք է անի Կառավարությունը, արդյո՞ք կան գործիքներ, որոնք պետք է ներդնի, սակայն չի ներդնում:

-Ձեր հարցը իրականում շատ կարեւոր է, եւ ես այդ հարցին հավաքական կպատասխանեմ: Պետք է աջակցություն լինի հատկապես գյուղատնտեսական ոլորտում, որպեսզի արտադրողն առաջնային անհրաժեշտության պարագաների արտադրությունը բավարարի, եւ առաջարկը ընթացքում չնվազի: Եթե գյուղատնտեսական արտադրությունը նվազում է, այստեղ նախ եւ առաջ խնդիր ունի Կառավարությունը: Այսինքն՝ կարելի է եզրակացնել այն ծրագրերը, որոնք Կառավարությունը ներկայացնում է եւ հանրայնացնում, իրենց սպասելի արդյունքը չեն տալիս: Այս իմաստով Հայաստանը գնում է աշխարհի միտումներին հակառակ ճանապարհով, եւ դա մի պարզ պատճառով, որ տնտեսապես զարգացած եւ զարգացող երկրները էական շեշտադրում են փոխել գյուղատնտեսական քաղաքականությունում, այսինքն՝ շուկայի կարգավորումն այլեւս դոմինանտ չի, եւ պետություններն աջակցում են գյուղատնտեսությանը հետեւյալ սկզբունքով, որ անգամ 1 քառակուսի մետր գյուղատնտեսական հող չմնա անմշակ:

-Իսկ Հայաստանում նման անմշակ հողերը շա՞տ են:

-Այո՛, իհարկե, եւ գնալով դրանք ավելանում են: Խնդիրն այն է, որ պարենային ապրանքների սրվելու պատճառը կապված է նաեւ պատերազմների, համավարակների եւ այլնի հետ: Ցանկացած երկիր ոչ թե որ ներկրում անի, այլ մտածում է բարելավել ներքին արտադրանքը եւ բերել առավելագույնի ներքին ապահովվածությունը սեփական արտադրանքով: Մենք ունեցել ենք տնտեսական տարբեր ցուցանիշներ. 2018 թվականին ունեցել ենք տնտեսական աճ, 2019 թվականին եւս ունեցել ենք աճ, 2020 թվականին տնտեսական նվազում, 2021 թվականին տնտեսական աճ, իսկ 2022 թվականին՝ անկում, բայց գյուղատնտեսության իմաստով շատ կարեւոր է, որ պարենային ապրանքների ապահովածության ցուցանիշը էապես նվազել է: Սա շատ մտահոգիչ հարց է, քանի որ 65 տոկոսով մեր երկիրը կարող էր իր պարենային ապահովածությունը ունենալ ցորենով, կաթնամթերքով եւ մյուս առաջնային պարենային ապրանքներով, սակայն այսօր այն նվազել եւ դարձել է 47 տոկոս: Մենք ավելի խոցելի ենք ոչ միայն այս իմաստով, այլ նաեւ այն հանգամանքով, որ ներմուծումից կախվածությունը մեծացել է:

Զրուցեց ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆԸ

ԱՀԱԶԱՆԳ

ՉՄԵՌԱՅԻՆ ՀԱՄԱԶԳԵՍՏ ՉԿԱ

Սեպտեմբերի 30-ին Հանրային հեռուստաընկերությանը տված հարցազրույցում, անդրադառնալով հանրությանը հուզող թեմաներին, մասնավորապես այն խոսակցություններին, որ հայադրբեջանական սահմանին վերջին էսկալացիայից հետո զինվորներին բահեր են անհրաժեշտ, դիրքերը կահավորված չեն, ինժեներական աշխատանքներն արված չեն եւ այլն, ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը նշել է. «Երեկ Պաշտպանության նախարարությունում խորհրդակցություն եմ հրավիրել, այն չի լուսաբանվել, որովհետեւ նպատակը եղել է մեկը, որովհետեւ ես գիտեմ, որ Հայաստանի բանակում ո՛չ բլունգի, ո՛չ բահի, ո՛չ շորի, ո՛չ կոշիկի, ո՛չ նույնիսկ տրակտորի խնդիր չպետք է լինի»:

Իսկ իրականում, ի հակադրություն վարչապետի պնդումների, ունենք այլ պատկեր: ArmLur.am-ի խմբագրությունն ահազանգեր է ստացել, որ ՀՀ զինված ուժերում ժամկետային զինծառայողներին ձմեռային համազգեստ (բաճկոն) չեն տրամադրում, արդյունքում ծնողներն են ստիպված ձեռք բերում անհրաժեշտ համազգեստը եւ ուղարկում իրենց զավակներին:

Ստացված ահազանգերի պարզաբանման համար ArmLur.am-ը դիմեց ՀՀ Պաշտպանության նախարարություն՝ պարզելու, թե ինչո՞ւ է նման իրավիճակ ստեղծվել, եւ ինչո՞ւ մինչ օրս զինվորներին ձմեռային համազգեստներ չեն տրամադրել:

Սակայն մեր հարցադրմանն ի պատասխան՝ նախարարությունից հայտնեցին, որ նշված տեղեկությունները տրամադրելու համար լրացուցիչ ուսումնասիրության անհրաժեշտություն կա:

Այսպիսով՝ մինչ պաշտպանության նախարարությունում կփորձեն ուսումնասիրել խնդիրը, զինվորները կշարունակեն ցրտաշունչ ձմռանը մրսելով սահմանը պահել, իսկ ծնողները կփորձեն համազգեստ ուղարկել:

ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ

ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, անկուսակցական Թագուհի Թովմասյանը սոցցանցի իր էջում գրում է. «ԱԺ իմ աշխատասենյակում հյուրընկալեցի Երեւանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների, համաշխարհային քաղաքականության եւ ամերիկագիտության բաժինների մագիստրանտներին:

Ուսանողներին ներկայացրի Խորհրդարանի կառուցվածքը, գործառույթները, իմ ղեկավարած հանձնաժողովի շրջանակներում ծավալվող գործունեությունը:

Մագիստրանտների մասնագիտացումից ելնելով՝խոսեցինք խորհրդարանական դիվանագիտության, մարդու իրավունքների պաշտպանությանն առնչվող խնդիրների, աշխարհաքաղաքական վերադասավորումների, ռազմագերիների վերադարձման, փախստականների հարցերի շուրջ: Մագիստրանտների խմբում արցախցի ուսանողների սրտառուչ մասնակցությամբ առանձնահատուկ անդրադարձ կատարեցինք Արցախյան հիմնախնդրին եւ արցախահայության առջեւ ծառացած մարտահրավերներին:

Միջազգայնագետներին խորհուրդ տվեցի լինել ակտիվ ու պահանջատեր, իրենց խողովակներով, միջազգային հասարակական կազմակերպությունների միջոցով մշտապես առաջ տանել Հայաստանի Հանրապետության եւ Արցախի Հանրապետության պետական շահը»:

11 ՏԱՐԻ ԱՆՑ

Եկող տարվա մայիսից հնարավոր կդառնա Հայաստանից ուղիղ չվերթով Լատվիա հասնել: «Էյր Բալթիկ ավիաընկերությունը վերսկսում է Ռիգա-Երեւան-Ռիգա ուղիղ չվերթները՝ 11 տարվա ընդմիջումից հետո: «Էյր Բալթիկ» ավիաընկերության Կովկասի տարածաշրջանի ներկայացուցիչ Մարիա Ռադչենկոյի փոխանցմամբ՝ այս տարվա մայիսից հայաստանցիները շաբաթական երկու անգամկարող են ոչ միայն Լատվիա, այլ նաեւ եվրոպական ու սկանդինավյան երկրներ այցելել: ՀՀ-ում Լատվիայի պատվո հյուպատոս Արմեն Ղասաբօղլյանը նշել է, որ այս թռիչքով ոչ միայն Լատվիան, այլ նաեւ Էստոնիան եւ Լիտվան կարող են բացահայտել, ուստի, շեշտում է պատվո հյուպատոսը, կարելի է անգամ առանց տարանցիկ չվերթի՝ բարձրակարգ ավտոբուսներով, այցելել եւ վայելել մերձբալթյան երկրները:

Նշենք, որ չվերթները մեկնարկելու են 2023 թվականի մայիսի 16-ից՝ շաբաթական երկու անգամ պարբերականությամբ:

ՓՈՐՁՈՒՄ ԷԻՆ ԷԺԱՆ ԳՈՎԱԶԴԻ ՎԵՐԱԾԵԼ

Իշխող քաղաքական թիմի համար, փաստորեն, անգամ շտապօգնության մեքենաների նվերը կարող է իրական տոնի վերածվել: Երեկ առողջապահության նախարարությունը տեղեկացրեց, որ Ճապոնիան Հայաստանին շտապօգնության 39 ավտոմեքենա է նվիրել: Առանձնահատուկ որեւէ բան չունեցող այս ինֆորմացիան ու իրադարձությունն անձամբ Նիկոլ Փաշինյանի՝ մեքենաները դիմավորելու «ավետիսով» մատուցվեց:

Աշխարհի բոլոր երկրների համապատասխան գերատեսչությունները վաղուց ի վեր արագագնաց ու բժշկական սարքավորումներով համալրված ավտոմեքենաներ ունեն, իսկ մեր երկրի ղեկավարությունը փոքր երեխայի՝ նոր խաղալիք ձեռք բերելու պես ուրախանում ու գլուխ է գովում, թե տեսեք՝ մեզ մեքենա են նվիրել: Քիչ չէ, որ առողջապահության նախարարությունը մեքենա ձեռք բերելու սովորական գործընթացը փորձել էր անհարկի ու էժան PR-ի վերածել: Ճերմակ խալաթ հագած աշխատակիցներին ցուրտ եղանակին դուրս էին հանել՝ «պատվելու» վարչապետ Փաշինյանին: Իսկ վարչապետ Նիկոլ Փաշինյանն այնպիսի խորազննին ու մուրադական հայացքով էր ուսումնասիրում ճապոնական մեքենաները, որ թվում էր՝ ռեանիմոբիլների նեղ մասնագետ է: Առհասարակ, անհասկանալի էր միջոցառմանը Երեւանի փոխքաղաքապետ Տիգրան Ավինյանի ներկայությունն ու առավել քան նրա՝ շտապօգնության մեքենայի ղեկին նստելը. որքանով տեղյակ ենք՝ նա ո՛չ առողջապահական ոլորտի մասնագետ է, ո՛չ քաղաքապետարանում այդ ոլորտի համակարգողը, ո՛չ էլ, առավել եւս, շտապօգնության մեքենա վարելու գծով մասնագիտացած վարորդ: Շտապօգնության մեքենաների PR-ով տարված ու մեքենաներն անձամբ դիմավորող առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանին, վարչապետ Փաշինյանին, երբեմնի փոխվարչապետ Ավինյանին ու պատգամավոր Արսեն Թորոսյանին ընդամենը հիշեցնենք, որ հենց իրենց կառավարման օրոք է, որ պատերազմների ժամանակ ռազմաճակատ շարքային քաղաքացիներն էին տարրական բինտ ու բամբակ ուղարկում, կորոնավիրուսի բուժումը վարչապետ Նիկոլ Փաշինյանն էր անլրջացնում ու ասում, թե դա հնարավոր է «տնական օղիով ախտահանել», միջոցառմանը ներկա, նախկին նախարար Արսեն Թորոսյանն էր կորոնավիրուսը ոչ վտանգավոր վիրուս համարում, եւ ունեցանք մեծ թվով զոհեր... Տիկին նախարարուհուն հիշեցնենք նաեւ, որ առ այս պահը հանրապետության տարբեր դիահերձարաններում շարունակում են անթաղ դիակներ մնալ, քանի որ մարդիկ չեն վստահում իր ղեկավարած կառույցների կողմից իրականացված ԴՆԹ հետազոտություններին ու իրենց ներկայացվող արդյունքներին: Էլ չասենք Աբովյանի դիահերձարանում գետնին նետված դիակների խայտառակ թեման...

ԹԵՐԱԳՆԱՀԱՏԵԼ Է

ՃԱԿԱՏԱԳՐԱԿԱՆ ԵՐԿՈՒ ՍԽԱԼ

Ռուսաստանի Դաշնության նախագահը թերագնահատել է իր աղագա հակառակորդին, ինչի համար գինը վճարել է: Այս մասին ասել է ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Ենս Ստոլտենբերգը Մադրիդում Հյուսիսատլանտյան դաշինքի Խորհրդարանական վեհաժողովի նստաշրջանում իր ելույթում՝ մատնանշելով «Վլադիմիր Պուտինի թույլ տված ռազմավարական սխալները»:

Ըստ Ստոլտենբերգի՝ Ուկրաինայի վրա հարձակման ժամանակ «Մոսկվան թույլ է տվել երկու մեծ սխալ, որոնք ճակատագրական դեր են խաղացել»:

ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարի խոսքով՝ «Պուտինը թերագնահատել է ուկրաինացիների քաջությունն ու կամքը՝ պայքարելու իրենց ազատության եւ պետության անկախության համար, ինչպես նաեւ թերագնահատել է Ուկրաինային աջակցելու ՆԱՏՕ-ի դաշնակիցների եւ գործընկերների միասնությունն ու անխախտ վճռականությունը»:

«Նա կարծում էր, որ կարող է Ուկրաինայում հաղթել մի քանի օրվա ընթացքում: Ինն ամիս անց Ռուսաստանը շարունակում է ձախողումը ձախողման հետեւից, իսկ ուկրաինացիները շարունակում են ազատել իրենց տարածքը օկուպացիայից»,- ընդգծել է Ստոլտենբերգը:

Միեւնույն ժամանակ Ստոլտենբերգն ասել է, որ Ռուսաստանին թերագնահատելը մեծ սխալ կլինի:

Այն շարունակում է ունենալ զգալի ռազմական հնարավորություններ եւ մեծ թվով զորքեր, նշել է գլխավոր քարտուղարը:

«Այսպիսով, մենք պետք է պատրաստ լինենք Ուկրաինային երկարաժամկետ աջակցելուն: Այո՛, ես գիտեմ, որ այս աջակցությունը գին ունի: Մեր երկրներում շատ մարդիկ բախվում են կյանքի ծախսերի ճգնաժամի: Աճում են էներգիայի եւ սննդի գները. շատերի համար դժվար ժամանակներ են: Բայց այն գինը, որը մենք վճարում ենք որպես ՆԱՏՕ-ի դաշնակիցներ, չափվում է փողով: Մինչդեռ ուկրաինացիները վճարում են մի գին, որը չափվում է արյունով:

Ուստի, եթե թույլ տանք Պուտինին հաղթել, բոլորս ստիպված կլինենք վճարել շատ ավելի բարձր գին:

Ամբողջ աշխարհում ավտորիտար ռեժիմները կսովորեն, որ բիրտ ուժով կարող են հասնել իրենց ուզածին:

Սա ուղղակի հետեւանքներ կունենա մեր անվտանգության համար: Դա ավելի վտանգավոր կդարձներ աշխարհը, իսկ մեզ՝ ավելի խոցելի: Դա է պատճառը, որ մենք չենք կարող թույլ տալ, որ նախագահ Պուտինը հաղթի Ուկրաինայում: Այսպիսով՝ մենք պետք է շարունակենք միասնական մնալ»,- եզրափակել է Ստոլտենբերգը:

Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը փետրվարի 24-ին ռուսաստանցիներին ուղղված ուղերձում հայտարարել էր, որ որոշում է կայացրել Դոնբասում հատուկ ռազմական գործողություն սկսելու մասին:

«Հանգամանքները մեզանից պահանջում են վճռական եւ անհապաղ գործողություններ: Դոնբասի ժողովրդական հանրապետությունները օգնության խնդրանքով դիմել են Ռուսաստանին: Այդ կապակցությամբ, իմ կողմից որոշում է ընդունվել հատուկ ռազմական գործողություն անցկացնելու մասին»,- ասել էր ՌԴ նախագահը:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՆՇԱՆԱԿՎԵԼ Է

Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահ Արգիշտի Քյարամյանի հրամանով Գոռ Աբրահամյանը նշանակվել է ՀՀ քննչական կոմիտեի նախագահի մամուլի քարտուղար:

ՀՈԼԱՆԴԱՑԻ ՄԱՍՆԱԳԵՏ

Երեւանի կենդանաբանական այգու զարգացման խնդիրներ են քննարկվել Երեւանի քաղաքապետ Հրաչյա Սարգսյանի եւ Նիդերլանդների կենդանաբան այգու մասնագիտական գծով տնօրեն, Եվրոպական կենդանաբանական այգիների եւ ակվարիումների միջազգային ասոցիացիայում Երեւանի կենդանաբանական այգու խորհրդատու Ջոսե Կոկի հանդիպման ժամանակ:Հրաչյա Սարգսյանը համոզմունք է հայտնել, որ Ջոսե Կոկի այցն իր հերթին կնպաստի մասնագիտական նոր լուծումներ կիրառելու գործին:

«Հաջորդ տարի մենք ծավալուն աշխատանքներ ենք նախատեսել կենդանաբանական այգում, եւ այս գործում մեզ համար անչափ կարեւոր է միջազգային մի շարք կառույցների հետ գործակցությունն ու փորձի փոխանակումը: Մեր նպատակն է այգում ստեղծել այնպիսի միջավայր, որն այցելուներին ավելի կմոտեցնի բնությանն ու հանգստի գոտուց բացի՝ կունենա նաեւ կրթական բաղադրիչ»,- ընդգծել է քաղաքապետը:

ԲԴԽ ՈՐՈՇՈՒՄ

Բարձրագույն դատական խորհրդի նախագահ Կարեն Անդրեասյանը Վերաքննիչ քրեական դատարանի դատավորի պաշտոնում առաջարկել է այս պահին ամենաբարձր վարկանիշ ունեցող, Երեւան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Դավիթ Բալայանի թեկնածությունը:

«Վերաքննիչ դատարաններում դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակի քրեական մասնագիտացման բաժնի թեկնածու Դավիթ Բալայանին առաջարկել Վերաքննիչ քրեական դատարանի դատավորի պաշտոնի թափուր տեղում իր թեկնածությունը՝ Հանրապետության նախագահի նշանակմանը ներկայացնելու նպատակով»,- նշվում է ԲԴԽ որոշման մեջ, որն արդեն ուղարկվել է ՀՀ նախագահին:

Նշենք, որ Դավիթ Բալայանն առաջին անգամ դատավոր է նշանակվել 2001 թվականին՝ զբաղեցնելով Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի դատարանի դատավորի պաշտոնը:

ԴԵՄ ԵՆ

ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆԸ՝ ԸՆԴԴԵՄ ՂՈՒԿԱՍՅԱՆԻ ՈՐԴՈՒ

Գլխավոր դատախազությունը բողոքարկել է Գյումրիի նախկին քաղաքապետ Վարդան Ղուկասյանի որդու գործով առաջին ատյանի դատարանի որոշումը եւ պահանջում է, որ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի՝ Սպարտակ Վարդանի Ղուկասյանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով եւ դատապարտել ազատազրկման՝ 7 (յոթ) ամիս ժամկետով, ՀՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասի կիրառմամբ՝ նշանակված պատժին հաշվակցել Սպարտակ Վարդանի Ղուկասյանի՝ 2021 թվականի օգոստոսի 19-ից մինչեւ նույն թվականի օգոստոսի 20-ը եւ 2021 թվականի նոյեմբերի 27-ից մինչեւ 2022 թվականի մայիսի 31-ը արգելանքի տակ գտնվելու ժամկետը եւ վերջնական պատիժ նշանակել ազատազրկում՝ 25 (քսանհինգ) օր ժամկետով կայացված դատավճիռը՝ ամբաստանյալ Սպարտակ Ղուկասյանի նկատմամբ որպես պատիժ նշանակելով ազատազրկումը՝ 1 տարի 6 ամիս ժամկետով:

Նշենք, որ ArmLur.am-ը գրել էր, որ Գյումրիի նախկին քաղաքապետ Վարդան Ղուկասյանի որդու գործով դատարանը որոշում է կայացրել:

Ինչպես հայտնի է՝ 2021 թվականին ոստիկանության աշխատակցի նկատմամբ բռնություն կիրառելու սպառնալիքի դեպքի առթիվ քննվող քրեական գործով 2021թ. օգոստոսի 18-ին վարույթն իրականացնող մարմնի կողմից Ս. Ղուկասյանին առաջադրվել էր մեղադրանք ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով եւ միջնորդություն ներկայացվել դատարան՝ նրա նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ:

Կալանավորման որոշումից անմիջապես հետո Սպարտակ Ղուկասյանը դիմել էր փախուստի. սեպտեմբերի 17-ին ոստիկանությունը նրա նկատմամբ հետախուզում էր հայտարարել, որից հետո Սպարտակ Ղուկասյանին հայտնաբերել եւ կալանավորել էին: Գործն ուղարկվել էր դատարան: Եվ ահա Armlur.am-ին հայտնի դարձավ, որ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանը այս գործով որոշում է կայացրել եւ արդյունքում որոշել է.

«Գյումրիի նախկին քաղաքապետ Վարդան Ղուկասյանի որդու՝ Սպարտակ Վարդանի Ղուկասյանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով եւ դատապարտել ազատազրկման՝ 7 (յոթ) ամիս ժամկետով:

ՀՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասի կիրառմամբ՝ նշանակված պատժին հաշվակցել Սպարտակ Վարդանի Ղուկասյանի՝ 2021 թվականի օգոստոսի 19-ից մինչեւ նույն թվականի օգոստոսի 20-ը եւ 2021 թվականի նոյեմբերի 27-ից մինչեւ 2022 թվականի մայիսի 31-ը արգելանքի տակ գտնվելու ժամկետը եւ վերջնական պատիժ նշանակել ազատազրկում՝ 25 (քսանհինգ) օր ժամկետով:

Պատժի սկիզբը հաշվել 2022 թվականի մայիսի 31-ից:

Պատիժը պետք է կրի ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության համապատասխան քրեակատարողական հիմնարկում:

Սպարտակ Վարդանի Ղուկասյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ կալանավորումը, թողնել անփոփոխ մինչեւ դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը:

Դատավճիռը կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քրեական դատարան՝ ստանալու պահից մեկամսյա ժամկետում»:

Նախկին քաղաքապետի որդին ազատության մեջ է, որը մեզ հետ զրույցում հայտնեց նաեւ վերջինիս պաշտպան Ռուբեն Հակոբյանը՝ նշելով, որ ակնհայտ անհիմն որոշում է եւ այն ենթակա է բեկանման: Իրենք դիմել են ՀՀ վերաքննիչ դատարան արդարացման հիմքով:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾ

ԵՐԵԽԱՆԵՐԻ ԱՊՕՐԻՆԻ ՈՐԴԵԳՐՈՒՄ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ երեխաների ապօրինի որդեգրման քրեական գործը Երեւան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանից տեղափոխվել է Հակակոռուպցիոն դատարան:

Այս տարվա հունիսի 22-ին ՀՀ քննչական կոմիտեն հայտնել էր, որ հատկապես կարեւոր գործերի քննության գլխավոր վարչությունում ավարտվել է 2015-2018թթ. ընկած ժամանակահատվածում օտարերկրյա քաղաքացի հանդիսացող անձանց կողմից Հայաստանի Հանրապետության քաղաքացի մանկահասակ երեխաների որդեգրումների գործընթացում ներպետական մարմինների աշխատակիցների կողմից թույլ տրված պաշտոնական անփութության, պաշտոնական լիազորությունները չարաշահելու, երեխաների առք ու վաճառքի, փողերի լվացման դեպքերի առթիվ ՀՀ ազգային անվտանգության ծառայությունում հարուցված, հետագայում ՀՀ քննչական կոմիտեի հատկապես կարեւոր գործերի քննության գլխավոր վարչությունում քննված քրեական գործով 11 մեղադրյալի մասով նախաքննությունը:

Ձեռք բերված բավարար ապացույցների համակցությամբ՝ վերոգրյալ կազմակերպությունների ներկայացուցչին մեղադրանք է առաջադրվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 168-րդ հոդվածի (Խնամքը ստանձնելու նպատակով երեխայի առքը կամ ստանձնողի խնամքին հանձնելու նպատակով երեխայի վաճառքը) 2-րդ մասի 2-րդ կետով, 168-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով եւ 190-րդ հոդվածի (Հանցավոր ճանապարհով ստացված գույքն օրինականացնելը (փողերի լվացումը) 3-րդ մասի 1-ին կետով, ՀՀ արդարադատության նախարարության ՔԿԱԳ գործակալության պետին եւ միջազգային պարտավորությունների ապահովման բաժնի պետին՝ 168-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով եւ 308-րդ հոդվածի (Պաշտոնական լիազորությունները չարաշահելը) 1-ին մասով, «Երեւանի «Մանկան տուն»» ՊՈԱԿ-ի տնօրենին, Երեւանի քաղաքապետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց եւ երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետին, «Վերարտադրողական առողջության, պերինատոլոգիայի, մանկաբարձության եւ գինեկոլոգիայի հանրապետական ինստիտուտ» ՓԲ ընկերության տնօրենին, փոխտնօրենին, բժշկին եւ թարգմանչին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 168-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության ընտանիքի, կանանց եւ երեխաների հիմնահարցերի վարչության երեխաների հիմնահարցերի բաժնի պետին՝ 308-րդ հոդվածի 2-րդ մասով, իսկ նույն բաժնի աշխատակցին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածի 2-րդ մասով:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ՀԱՅՏՆԱԲԵՐԵԼ ԵՆ

Նոյեմբերի 16-ին համացանցում տեսանյութ էր տարածվել, որտեղ երեւում էր, թե ինչպես են մի խումբ անձինք «Մուրացան» բժշկական կենտրոնում հարվածներ հասցնում հիվանդանոցի անվտանգության աշխատակցին: Նոյեմբերի 17-ին ոստիկանության Էրեբունու բաժնի քրեական հետախույզները, Երեւան քաղաքի վարչության գործընկերների հետ ձեռնարկած միջոցառումների արդյունքում, մայրաքաղաքի Բաբաջանյան փողոցում ձերբակալեւ եւ, մեքենայով հանդերձ, ոստիկանության Էրեբունու բաժին եւ տեղափոխեւ տեսագրությունում երեւացող անձանցից երկուսին, որոնցից մեկը Շիրակի մարզի Փոքր Մանթաշ գյուղի բնակիչ է, մյուսը՝ Երեւանի: Երկուսն էլ՝ նախկինում մի քանի անգամ դատապարտված: Ջնսությամբ մեքենայում մարիխուանայի նմանվող զանգված է հայտնաբերվել:

Բերման ենթարկվածները ներկայացվել են Էրեբունի եւ Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժին, որտեղ դեպքի առթիվ նախաձեռնվել է քրեական վարույթ: Էրեբունու ոստիկանները հայտնաբերել եւ նախաքննական մարմնին են ներկայացրել նաեւ միջադեպի մյուս մասնակիցներին: Հանգամանքները նախաքննությամբ պարզվում են:

ԱՐՏԱՌՈՑ ԴԵՊՔ

Երեւանում նոյեմբերի 21-ին արտառոց դեպք է տեղի ունեցել. ժամը 21:30-ի սահմաններում ԱԻՆ Փրկարար ծառայության 911 եւ ՀՀ ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոններ ահազանգ է ստացվել, որ Նոր Նորք վարչական շրջանի Թոթովենցի փողոցի շենքերից մեկի բնակիչը կնոջ հետ վիճաբանություն է ունեցել, ապա տան դուռը փակել կնոջ վրա ու հեռացել: Տանը կնոջ ինքնազգացողությունը վատացել է:

Պարեկները սահմանազատել են տարածքը: Լրացուցիչ ժամանել է ԱԻՆ ՓԾ Երեւանի թիվ 9 հրշեջ-փրկարարական ջոկատի ավտոսանդուղքը, որով փրկարարները մոտեցել են շենքի տան պատուհանին, ավտոսանդուղքի միջոցով 4-րդ հարկի տան պատուհանից իջեցրել են նույն տան բնակիչ, 43-ամյա Գ. Ա-ին եւ մոտեցրել օպերատիվորեն ժամանած շտապօգնության ավտոմեքենային:

Ոստիկանությունը տեղում պարզել է նաեւ, որ ամուսինը կնոջ նկատմամբ բռնություն են կիրառել, կինը հերքել է այդ փաստը:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ նոյեմբերի 21-ից 22-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտել են հանցագործության 50 դեպք, որից 4-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՏՆՕՐԵՆԻՆ ԴԱՏՈՒՄ ԵՆ

Նիկոլ Փաշինյանի իշխանության օրոք Տավուշի մարզի 4 անտառտնտեսություններից 2-ի՝ Արծվաբերդի եւ Սեւքարի անտառտնտեսությունների տնօրենները փոխվել են, նշանակվել են ներկայիս իշխանության հետ սերտ կապեր ունեցող անձինք: Բերդի տարածաշրջանի անտառների պահպանությամբ զբաղվող Արծվաբերդի անտառտնտեսության տնօրենի պաշտոնակատար էր նշանակվել Նորայր Պապյանը, որը մինչ այդ նույն անտառտնտեսության տնօրենի տեղակալն էր: Ամեն ինչ փոխվեց 2021թ. հոկտեմբերի 25-ին, երբ Ն. Պապյանն անտառտնտեսության ավտոմեքենայով վթարի ենթարկվեց, որի հետեւանքով ընդհատվեցին նրա վարած ավտոմեքենայում գտնված, այդ անտառտնտեսության անտառապահներ, 57-ամյա Կամո Պետրոսյանի, 56-ամյա Սարգիս Բաբայանի եւ Իջեւան քաղաքի 40-ամյա բնակիչ Արկադի Ամիրխանյանի կյանքերը: Ա. Ամիրխանյանը նախկինում աշխատել էր Բերդի տարածաշրջանի ջրօգտագործողների ընկերության տնօրեն, նա առաջիկա օրերին պետք է նշանակվեր «Հայանտառ» ՊՈԱԿ Արծվաբերդի անտառտնտեսության ինժեներ: Ըստ մեղադրական եզրակացության՝ Նորայր Պապյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա հանդիսանալով «Հայանտառ» ՊՈԱԿ «Արծվաբերդի անտառտնտեսություն մասնաճյուղի» տնօրենի պաշտոնակատար, 2021թ. հոկտեմբերի 25-ին Բերդ-ճամբարակ ուղղությամբ վարել է նույն անտառտնտեսության հաշվեկշռում գտնվող «ՈՒԱԶ» մակնիշի տրանսպորտային միջոցը, տեխնիկական տեսանկյունից ստեղծել է վթարային իրադրություն, թույլ տվել ՃԵԿ-ի 66-րդ կետի եւ ճանապարհային երթեւեկության անվտանգության ապահովման մասին ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին հակասող գործողություններ, դրանցով իսկ պայմանավորել տվյալ ճանապարհատրանսպորտային պատահարի առաջացումը, կորցրել իր կողմից վարած ավտոմեքենայի ընթացքի կառավարումը, որի հետեւանքով դուրս է եկել ճանապարհի երթեւեկելի մասից, կողաշրջվել եւ կողապտույտներ կատարելուց հետո հայտնվել ձորում, որի հետեւանքով ուղեւորներ Կ. Պետրոսյանը, Ս. Բաբայանը, Ա. Ամիրխանյանը ստացված վնասվածքներից մահացել են: Ն. Պապյանին մեղադրանք է առաջադրվել քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 3-րդ մասով, որը համապատասխանում է 2022թ. հուլիսի 1-ից ուժի մեջ մտած ՀՀ քրեական օրենսգրքի 342-րդ հոդվածի 3-րդ մասին: Սույն հոդվածը որպես պատիժ նախատեսում է ազատազրկում՝ չորսից ութ տարի ժամկետով: Ն. Պապյանի նկատմամբ խափանման միջոց է ընտրվել բացակայելու արգելքը: 2022թ. հոկտեմբերի 28-ից Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանում, դատավոր Արամ Մարտիրոսյանի նախագահությամբ ընթանում են նախնական դատալսումներ, դատական հերթական նիստը նշանակված է նոյեմբերի 25-ին:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՆԱԽԱԳԻԾ

ՏԱՐԿԵՏՄԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը հանրային քննարկման է ներկայացրել բնագիտական, տեխնոլոգիական, ճարտարագիտական եւ մաթեմատիկական (ԲՏՃՄ) ուղղություններով ոլեռության համար առաջնահերթ եւ կարեւորություն ներկայացնող մասնագիտություններով համապատասխան բուհերում սովորող քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տրամադրելու կարգի եւ պայմանների նախագիծը: Նախագիծը մշակվել է՝ հիմք ընդունելով «Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում կատարված համապատասխան լրացումները:

ՀՀ ԿԳՄՍ նախարարությունից Armlur.am-ին հայտնեցին, որ համաձայն նախագծի՝ ԿԳՄՍ նախարարությունը մինչեւ 2022 թվականի դեկտեմբերի 31-ը, իսկ այնուհետ, որպես կանոն, յուրաքանչյուր տարին մեկ անգամ՝ մինչեւ սեպտեմբերի 1-ը, պետական համապատասխան մարմիններին առաջարկում է նախարարություն ներկայացնել ԲՏՃՄ մասնագիտությունների ցանկը, որոնցում սահմանված կարգով ընդունվելը եւ սովորելը համարվելու է պետության համար առաջնահերթ եւ կարեւոր:

Պետական մարմինները նախարարություն են ներկայացնում առաջարկ, որն իր մեջ ներառում է՝

-մասնագիտությունների (կրթական ծրագրերի) ցանկ,

-ըստ կրթական աստիճանների՝ տարկետման համար անհրաժեշտ տեղերի քանակ,

-հիմնավորում՝ ընտրված մասնագիտությունների եւ տարկետման համար հատկացվող տեղերի անհրաժեշտության վերաբերյալ,

-համապատասխան մասնագիտություններով սովորելու դեպքում ակնկալվող արդյունքը, պետության համար առաջնահերթությունը եւ կարեւորությունը փաստող հանգամանքները, ինչպես նաեւ ազդեցությունը ոլորտի զարգացմանը,

-առաջարկվող մասնագիտություններով սովորող կամ ավարտած ուսանողների մասնագիտական գիտելիքները հետագայում օգտագործելու կանխատեսվող շրջանակը եւ այն պայմանները, որոնք ուսումնառության ընթացքում կամ ուսումը ավարտելուց եւ տարկետումը վերջանալուց հետո պարտադիր է քաղաքացու համար,

-ասպիրանտական կրթական ծրագրի համար համապատասխան մասնագիտությունների առաջարկ ներկայացնելու դեպքում նաեւ ասպիրանտուրան ավարտելուց հետո քաղաքացիներին աշխատանքով ապահովելու երաշխավորագիր:

Պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում ստանալու համար ՀՀ կառավարության որոշման նախագծում սահմանված բուհերի համապատասխան մասնագիտությամբ ընդունվելու համար դիմորդները պետք է հավաքեն ընդունելության քննությունների առավելագույն միավորի առնվազն 75 տոկոսը: Կառավարության որոշումը իր մեջ ներառում է՝ բուհերը եւ ըստ կրթական աստիճանի համապատասխանն ԲՏՃՄ մասնագիտությունների ցանկը: Սահմանված են նաեւ ընդունելության տեղերի եւ տարկետման համար հատկացվող տեղերի տարբերության դեպքում տարկետման համար ընդունվողների մուտքային պահանջների, դրանց հավասարության դեպքում այլ պահանջների եւ առկա ուսուցմամբ ընդունվելու եւ հաջորդ կուրս փոխադրվելու հանգամանքը, ինչպես նաեւ տարկետում ստանալու համար սահմանված պայմանները ու քաղաքացու եւ համապատասխան մասնագիտության համար հայտը եւ երաշխավորագիրը:

Պետական մարմնի եւ կազմակերպության միջեւ կնքվող պայմանագրով ամրագրվում է, որ քաղաքացին ասպիրանտուրան ավարտելուց եւ թեկնածուական ատենախոսությունը պաշտպանելուց հետո պարտավորվում է 3 տարի ժամկետով աշխատել պայմանագրով նշված կազմակերպությունում՝ կատարելով գիտական, մանկավարժական կամ մասնագիտական աշխատանք:

Պայմանագրային պարտավորությունն ամբողջությամբ չկատարելու դեպքում քաղաքացին կամ երաշխավորագիր ներկայացրած կազմակերպությունն այն դեպքում, երբ հրաժարվում է քաղաքացուն ապահովել համապատասխան աշխատանքով, պարտավորվում է միանվագ վճարել ուսումնառության տարիների համար սահմանված ուսման վարձի հանրագումարի կրկնապատիկը: Պայմանագրում նախատեսված ժամկետում քաղաքացու կողմից նշված գումարը չվճարվելու դեպքում դրա բռնագանձումն իրականացվում է դատական կարգով՝ տարկետման հայտ եւ երաշխավորագիր ներկայացված կազմակերպության կողմից, իսկ կազմակերպության դեպքում՝ նախարարության կողմից:

Հաջորդ կուրս փոխադրվելու հանգամանքը չբավարարելու դեպքում քաղաքացին կորցնում է տարկետման իրավունքը եւ ենթակա է պարտադիր զինվորական ծառայության՝ հայտարարված զորակոչի ընթացքում՝ բացառությամբ սահմանված կարգով ակադեմիական արձակուրդ ստանալը:

Տարկետման ժամկետի ընթացքում ուսումնառությունը դադարեցվելու, ինչպես նաեւ փաստաթղթերը սահմանված ժամկետում չներկայացվելու դեպքերում ՀՀ պաշտպանության նախարարությունը ԿԳՄՍՆ է ներկայացնում քաղաքացու տվյալները, որոնց հիման վրա մեկամսյա ժամկետում Կառավարություն է ներկայացվում քաղաքացուն տրված տարկետումը դադարեցնելու մասին որոշման նախագիծ:

Քաղաքացուն յուրաքանչյուր կրթական ծրագրով ուսումնառության համար տարկետում կարող է տրվել մեկ անգամ: Տարկետում տրվում է համապատասխան կրթական ծրագրով ուսումնառության ժամկետով՝ սակայն ոչ ավելի, քան մինչեւ քաղաքացու 27 տարին լրանալու օրը: Քաղաքացիները եւ շահառու խմբերը նախագծի վերաբերյալ իրենց առաջարկություններն ու դիտողությունները կարող են ներկայացնել մինչեւ դեկտեմբերի 4-ը:

Ն.Հ.

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՇԻՎ

ԿԿԻՐԱՌՎԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Բազմաբնակարան շենքերի սեփականատերերից պարտադիր եւ այլ վճարներն անկանխիկ եղանակով հավաքագրելու նպատակով բանկային հաշիվ չբացելու համար կկիրառվի վարչական պատասխանատվություն: Քաղաքաշինության կոմիտեն տեղեկացնում է, որ Ազգային ժողովի կողմից ընդունվել է եւ նոյեմբերի 24-ից ուժի մեջ կմտնի ««Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքը:

Այսպիսով՝ բազմաբնակարան յուրաքանչյուր շենքի համար բանկային առանձին հաշիվ չբացելու դեպքում շենքի կառավարման մարմնի նկատմամբ կնշանակվի տուգանք՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափով, իսկ արարքի՝ վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո մեկ ամսվա ընթացում կրկնվելու դեպքում կնշանակվի տուգանք յուրաքանչյուր խախտման համար՝ սահմանված տուգանքի կրկնապատիկի չափով: Վարչական պատասխանատվության նախատեսումը նպատակ ունի բարձրացնել բազմաբնակարան շենքի կառավարման մարմինների զգոնությունը, աշխատելաոճի թափանցիկությունը, հաշվետվողականությունը, հավաքագրված գումարների ծախսման արդյունավետությունը, ինչպես նաեւ պահուստային ֆոնդ ձեւավորելու հնարավորությունը: Հիշեցնենք, որ սեփականատերերի կողմից վճարներն անկանխիկ եղանակով կատարելու եւ այդ նպատակով բանկային առանձին հաշվի բացման հետ կապված դրույթներն ամրագրվել են դեռեւս 2020 թվականին «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» եւ «Համատիրության մասին» ՀՀ օրենքներում կատարված փոփոխություններով եւ լրացումներով: «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի համաձայն՝ այս դեպքերով տույժ նշանակելու իրավունք ունեն համայնքի ղեկավարները:

● Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 9 ՃՏՊ. 12 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ԼՈՒՐԵՐ

ՆՎԻՐԱԲԵՐԵԼ ԵՆ ԿԵՆՏՐՈՆԻՆ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը ներկա է գտնվել Այրվածքաբանության ազգային կենտրոնի բակում Ճապոնիայի կառավարության կողմից Հայաստանին նվիրաբերված շտապբուժօգնության նոր մեքենաների հանձնման արարողությանը:

Միջոցառմանը ներկա են եղել Առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանը, ԱԺ պատգամավոր Արսեն Թորոսյանը, Երեւանի քաղաքապետի տեղակալ Տիգրան Ավինյանը, ՀՀ-ում Ճապոնիայի արտակարգ եւ լիազոր դեսպան Մասանորի Ֆուկուշիման եւ այլ պաշտոնատար անձինք:

Շտապբուժօգնության մեքենաները մեր երկրին են նվիրաբերվել Հայաստանի Հանրապետության եւ Ճապոնիայի կառավարությունների միջեւ 2020 թվականի հունիսի 30-ին կնքված «Տնտեսական եւ սոցիալական զարգացում» դրամաշնորհի համաձայնագրի շրջանակում:

Հայաստանին տրամադրված շտապօգնության նոր սերնդի՝ ընդհանուր թվով 39 ավտոմեքենայից 35-ը գծային շտապօգնության մեքենա է, 4-ը՝ ռեանիմոբիլ: Վարչապետը ծանոթացել է մեքենաների հնարավորություններին:

Պատասխանատուներն ընդգծել են, որ վերջիններս հագեցած են ժամանակակից բժշկական սարքերով, օժանդակ պարագաներով: Ծրագրի արժեքը կազմել է 3,5 մլն դոլար:

ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Շրջակա միջավայրի նախարարության Ջրային ռեսուրսների կառավարման վարչության կողմից ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ Կառավարության 07.03.2003թ. N217-Ն եւ N218-Ն որոշումների պահանջների համաձայն՝ մշակվում է «Հոստուն» ՍՊԸ-ն՝ Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնքի Շատին գյուղի վարչական տարածքում «Սելիմե» փիէկի կառուցման նպատակով Սալի գետից՝ 790.0 լ/վ ջրառ իրականացնելու ջրօգտագործման թույլտվության ստացման նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, որոնք կցանկանան ծանոթանալ փաստաթղթի մշակման աշխատանքներին եւ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին ժամը 17-ից 18-ը դիմել ջրային ռեսուրսների կառավարման եւ պահպանության մարմին (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ):

Ծանուցմամբ ներկայացված փաստաթղթի նախագծի նախնական տարբերակի վերաբերյալ դիտողություններ եւ առաջարկություններ ներկայացնելու դեպքում փաստաթղթի քննարկումը տեղի կունենա 2022 թվականի նոյեմբերի 29-ին ժամը, 16:00-ին, Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

Շրջակա միջավայրի նախարարություն

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ. ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔ

«Ատաստ Ֆուդ» ՍՊԸ-ին պատկանող՝ ստորեւ նշված շարժական եւ անշարժ գույքերը հրապարակային սակարկություններով (աճուրդ) վաճառելու մասին

«ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ սնանկության գործով կառավարիչ Մակար Եղիազարյանի կողմից 13.12.2022 թվականին ժամը 15:00-ին ք?Երեւան, Ադոնցի 6/1, 303 հասցեում կանցկացվի ՀՀ Սնանկության դատարանի թիվ ՍՆԴ/0888/04/21 սնանկության գործով 24.05.2021 թվականինկայացվածվճռովսնանկճանաչված «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ-ի ստորեւ նշված շարժական եւ անշարժ գույքերի հրապարակային սակարկություններով վաճառքը հետեւյալ լոտերով.

Լոտ 1 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պարտավորությունների կատարման ապահովման նպատակով «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ օգտին գրավադրված, եւ Տարոն Արտուշի Ղուկասյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ, Գեղարքունիքի մարզ, Վարսեր համայնքի տարածք հասցեում գտնվող անշարժ գույքը, սեփականության իրավունքի վկայական՝2480935:

-Մեկնարկային գին՝4,665,600 ՀՀ դրամ:

Լոտ 2 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պարտավորությունների կատարման ապահովման նպատակով «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸօգտին գրավադրված, եւ Տարոն Արտուշի Ղուկասյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Սեւան, հյուսիս արեւմտյան մաս, «Իշխան» ռեստորանի հյուսիս արեւմուտք հողատարածք հասցեում գտնվող անշարժ գույքը, սեփականության իրավունքի վկայական՝2161076:

-Մեկնարկային գին՝3,758,400 ՀՀ դրամ:

Լոտ 3 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պարտավորությունների կատարման ապահովման նպատակով «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸօգտին գրավադրված, եւ Տարոն Արտուշի Ղուկասյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ, Գեղարքունիքի մարզ, Աղբերք համայնք, փող. 13, հողամաս 11 բնակավայրի հող հասցեում գտնվող անշարժ գույքը, սեփականության իրավունքի վկայական՝2626848:

-Մեկնարկային գին՝1,620,000 ՀՀ դրամ:

Լոտ 4 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված, եւ Անուշ Միլիտոսի Հովհաննիսյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ, Գեղարքունիքի մարզ, Շորժա համայնք բնակավայրի հող հասցեում գտնվող անշարժ գույքը, սեփականության իրավունքի վկայական՝2140468:

-Մեկնարկային գին՝1,360,800 ՀՀ դրամ:

Լոտ 5 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված, եւ Տարոն Արտուշի Ղուկասյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Մարտունի, Մյասնիկյան 3 նրբ., թիվ 24,26 հասցեում գտնվող տնամերձ հողամաս անշարժ գույքը, սեփականության իրավունքի վկայական՝2290379:

-Մեկնարկային գին՝1,984,500 ՀՀ դրամ:

Լոտ 6 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված, եւ Տարոն Արտուշի Ղուկասյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Մարտունի, Երեւանյան փողոց, հողամաս հասցեում գտնվող անշարժ գույքը, սեփականության իրավունքի վկայական՝2186432:

-Մեկնարկային գին՝907,200 ՀՀ դրամ:

Լոտ 7 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պարտավորությունների կատարման ապահովման նպատակով «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸօգտին գրավադրված, եւ Տարոն Արտուշի Ղուկասյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, Ազատության 57/21 բնակարան հասցեում գտնվող անշարժ գույքը, սեփականության իրավունքի վկայական՝2430110:

-Մեկնարկային գին՝5,994,000 ՀՀ դրամ:

Լոտ 9 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված, եւ Տարոն Արտուշի Ղուկասյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ, Արարատի Մարզ, Մասիս համայնքում գյուղնշանակության հողամաս հասցեում գտնվող անշարժ գույքը, սեփականության իրավունքի վկայական՝2183736:

-Մեկնարկային գին՝1,806,300 ՀՀ դրամ:

Լոտ 10 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պատկանող եւվերջինիսկողմիցիր պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված «FORD» մակնիշի, TRANZIT 2.4 TD տիպարի, 2000թ. արտադրության, 104 PP 11 պետհամարանիշով, կարմիր գույնի, բեռնատար տեսակի ավտոմեքենան (նույնացման համար՝ WF0LXXGBFLYC10424, գտնվելու վայրը՝ ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գյուղ Վերին Գետաշեն, Բ թաղամաս, 2-րդ փողոց, 12):

-Մեկնարկային գին՝1,996,650 ՀՀ դրամ:

Լոտ 11 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պատկանող եւ վերջինիս կողմից իր պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված «MITSUBISHI» մակնիշի, MONTERO SPORT 3.0 տիպարի, 2000թ. արտադրության, 104 LL 11 պետհամարանիշով, սեւ գույնի, ունիվերսալ տեսակի ավտոմեքենան (նույնացման համար՝ JA4LS21HXYP038422, գտնվելու վայրը՝ ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գյուղ Վերին Գետաշեն, Բ թաղամաս, 2-րդ փողոց, 12):

-Մեկնարկային գին՝1,377,000 ՀՀ դրամ:

Աճուրդին մասնակցելու համար պետք է ներկայացվեն՝

ա/ ֆիզիկական անձանց դեպքում՝ անձնագրի պատճենը,

բ/ իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի դեպքում՝դրանց պետական գրանցում հավաստող փաստաթղթերի պատճենները,

գ/ աճուրդի մասնակցության վճարի եւ նախավճարի վճարումները հավաստող փաստաթղթերը (անդորրագրերը):

Աճուրդում ներկայացված բոլոր գույքերի վրա առկա են «Սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված սահմանափակումներ եւ հանդիսանում են գրավի առարկաներ:

Աճուրդին մասնակցելու ցանկություն ունեցող անձինք աճուրդին մասնակցելու համար կարող են աճուրդի մասնակցության հայտ(եր)ը ներկայացնել ՀՀ սնանկության դատարան սույն հայտարարությունը հրապարակվելուց հետո մինչեւ աճուրդին նախորդող օրվա ժամը 16:00-ն ընկած ժամանակահատվածում:

Աճուրդին մասնակցելու ցանկություն ունեցող անձինք վճարում են մասնակցության վճար եւ նախավճար, որոնք կազմում են տվյալ լոտի մեկնարկային գնի համապատասխանաբար 1 (ոչ ավել քան 10,000 ՀՀ դրամը) եւ 5 տոկոսները: Մասնակցության վճարը եւ նախավճարը ենթակա են վճարման «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ սնանկության գործովթիվ 2480102725520000 «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ հատուկ հաշվին՝ մինչեւ աճուրդի մասնակցության հայտ(եր)ը ՀՀ սնանկության դատարան ներկայացնելը:

Սույն հայտարարությամբ նախատեսված աճուրդի օրը կարող է փոխվել եւ/կամ հետաձգվել՝ այդ մասին աճուրդի օրվանից ոչ պակաս երեք օր առաջ համապատասխան հայտարարություն կատարելու միջոցով:

Աճուրդն անցկացվելու է բաց դասական (գնի ավելացման) եղանակով, հետեւաբար աճուրդում հաղթող է համարվում առավել բարձր գին վճարող մասնակիցը:

Աճուրդում հաղթող ճանաչվելու դեպքում, լոտի արժեքը ենթակա է վճարման աճուրդն անցկացնելու օրվանից 10 (տասը) օրյա ժամկետում սնանկության հատուկ հաշվին լոտի գնման գինը՝հաշվանցելով նախօրոք վճարած նախավճարը:

Աճուրդում հաղթող համարվող անձի հետ առուվաճառքի պայմանագրի կնքման, դրանից ծագող իրավունքների պետական գրանցման, գույքը գնորդին փոխանցելու եւ պայմանագրից բխող բոլոր անհրաժեշտ ծախսերը ենթակա են կատարման աճուրդում հաղթող համարվող անձի կողմից:

Աճուրդի անցկացման, լոտի ծանոթացման եւ ուսումնասիրության համար դիմել սնանկության գործով կառավարիչ Մակար Եղիազարյանին (հեռ.՝ 060 500 250, էլ. Փոստ՝ makar.yeg@gmail.com)՝ աշխատանքային օրերին 11:00-16:00-ն ընկած ժամանակահատվածում:

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

«Բի Էս Թի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «Ակսոն» ԱՀ Բորսայի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու են «Արդշինբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝բանկ) գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտերը.

- Արմավիրի մարզ, համայնք Վաղարշապատ ք.,Մ. Մաշտոցիփողոց, 77 շենք, 5 հասցեումգտնվող 77,2 ք.մ.բնակարան: Լոտիմեկնարկայինգինը՝ 19000000 ՀՀ դրամ:

- ք. Երեւան,Աջափնյակ,Բաշինջաղյան 1 փողոց, 13 շենք, 55 հասցեումգտնվող 73,2 ք.մ. բնակարանեւ 0,6 ք.մ. ինքնակամշինություն: Լոտիմեկնարկայինգինը՝21100000 ՀՀդրամ:

- Լոռու մարզ, համայնք Ստեփանավան, Ստեփանավան ք.,Թումանյանփողոց, 41 հասցեում գտնվող 118 ք.մ. բնակելի տուն, 34,5 ք.մ. ավտոտնակ, 8,6 ք.մ.բաղնիք, 14,4 ք.մ. /17,3 խ.մ./ պարիսպեւ 0.0921 հահողամաս: Լոտիմեկնարկայինգինը՝ 7000000 ՀՀդրամ:

Լոտերի նկատմամբ սահմանափակումները՝ գույքերը գրավադրված են:

Աճուրդի փուլերը՝ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 09.12.2022թ.-ին, ժ. 12:00-ին դասական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝հոլանդական եղանակով: Աճուրդի ավարտը՝ 09.01.2023թ.-ին: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Բի Էս Թի» ՍՊԸ-ի դրամարկղումաճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին) կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւնախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, որն առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտերն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեներով եւ ծանոթանալ լոտերիհետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմիցլոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am, www.akson.am կայքերը:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԿԱՐԾԻՔ

ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ

ՆԱԽԱՐԱՐՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Վահրամ Դումանյանն ընդունել է 2022 թվականին 7 առարկայի գծով միջազգային օլիմպիադաներում մեդալներ նվաճած աշակերտներին: Այս տարի հայ աշակերտները ռեկորդային՝ 21 մեդալ են նվաճել տարբեր առարկաների միջազգային օլիմպիադաներում:

ՀՀ ԿԳՄՍ նախարարությունից Armlur.am-ին հայտնեցին, որ հանդիպմանը ներկա են եղել ԿԳՄՍ նախարարի տեղակալ Ժաննա Անդրեասյանը, Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ հատուկ դպրոցի գիտատեխնիկական աշխատանքների գծով փոխտնօրեն Հայկազ Նավասարդյանը, Հայաստանում կայացած Կենսաբանության միջազգային օլիմպիադայի ծրագրի ղեկավար Գայանե Ղուկասյանը, նախարարության այլ ներկայացուցիչներ, աշակերտներ:

Նախարար Վահրամ Դումանյանը շնորհավորել է հաջող ելույթների եւ արդյունքների համար՝ ընդգծելով, որ առարկայական օլիմպիադաներում մեր դպրոցականների նվաճած յուրաքանչյուր մեդալ կարեւոր է: «Ձեր մասնակցությունը միջազգային առարկայական օլիմպիադաներին ու գրանցած հաջողությունները շատ կարեւոր են պետության համար, քանի որ դրանով ընդգծվում է մեր կրթության մրցունակությունը միջազգային չափանիշներով»,- նշել է Վահրամ Դումանյանը՝ կոչ անելով օլիմպիական ակտիվությունը շարունակել ավելի մեծ եռանդով:

Վահրամ Դումանյանն անդրադարձել է նաեւ ամռանը Երեւանում անցկացված Կենսաբանության 33-րդ միջազգային օլիմպիադային.«Այն բացառիկ իրադարձություն էր:Մենք պետք է ավելացնենք նման օրինակ միջազգային օլիմպիադաները մեր երկրում անցկացնելու հաճախականությունը եւ ընդլայնենք առարկաների ցանկը: Իհարկե, սա բավական պատասխանատու եւ աշխատատար գործընթաց է, բայց մենք գնալու ենք այդ ճանապարհով»:

Հանդիպման ընթացքում ԿԳՄՍ նախարարը ներկայացրել է բոլոր 21 մեդալակիրներին, շնորհավորել եւ զրուցել նրանց հետ:

Երեւանում անցկացված Կենսաբանության միջազգային 33-րդ օլիմպիադայում «Հերացի» ավագ դպրոցի սովորող Արման Հայրապետյանը բրոնզե մեդալ էր նվաճել: Հայաստանի թիմերը միջազգային օլիմպիադայում նաեւ 2 արծաթե եւ 4 բրոնզե մեդալ են նվաճել «Մաթեմատիկա», 3 բրոնզե մեդալ՝ «Ֆիզիկա», 1 արծաթե եւ 3 բրոնզե մեդալ՝ «Քիմիա», 2-ական բրոնզե մեդալ՝ «Աշխարհագրություն» եւ «Ինֆորմատիկա», եւս 3 բրոնզե մեդալ՝ «Աստղագիտություն» առարկաներից:

Հանդիպմանը ներկա է եղել նաեւ ԱՅԲ դպրոցի 11-րդ դասարանի աշակերտուհի Արմինե Քեշիշյանը, որը սեպտեմբերի 27-ից հոկտեմբերի 1-ն Իտալիայի մայրաքաղաք Հռոմում մասնակցել է Hippo «EnglishWithoutBorders» անգլերենի միջազգային օլիմպիադային եւ զբաղեցրել առաջին հորիզոնականը: 10-րդ անգամ անցկացվող այս օլիմպիադային 54 երկրի 184 ներկայացուցիչ է մասնակցել: ԿԳՄՍ նախարարի տեղակալ Ժաննա Անդրեասյանը եւս շնորհավորել է աշակերտներին ու շնորհակալություն հայտնել կատարած աշխատանքի եւ ունեցած ձեռքբերումների համար. «Մենք, կարծես, սովորել ենք ամեն տարի միջազգային օլիմպիադաներից նվազագույնը 20 մեդալ ունենալ: Իհարկե, տարբեր կարգի մեդալների մասին է խոսքը, բայց նման ցուցանիշների առկայությունը խոսում է այն մասին, որ մենք օլիմպիադայի հանրապետական փուլերում կարողանում ենք ձեւավորել մրցունակ թիմեր, որոնք պատշաճ հանդես են գալիս նաեւ միջազգային օլիմպիադաներում: Այս մեդալները մեր աշակերտների անձնական ձեռքբերումներն են, բայց սա նաեւ թիմային աշխատանքի արդյունք է»:

Նշենք, որ միջազգային օլիմպիադաների մրցանակակիրներին պետության կողմից կրթաթոշակ է հատկացվում. առաջին կարգի դիպլոմակիրներին՝ ամսական 25 հազար դրամ, երկրորդ կարգի դիպլոմակիրներին՝ 20, իսկ երրորդ կարգի դիպլոմակիրներին՝ 15 հազար դրամ: Հանդիպման ընթացքում քննարկվել են նաեւ առարկայական օլիմպիադաներում ավելի մեծ թվով դպրոցների ներգրավվածության, հնարավորինս շատ դպրոցականների արդյունավետ մասնակցության հարցերը:

ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՈԹՈՂՆԵՐ

ՆՈՐԱՀԱՅՏ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ

Տեղի է ունեցել ՀՀ ԿԳՄՍ նախարարության պատմության եւ մշակույթի հուշարձանների պահպանության վարչության փորձագիտական հանձնաժողովի չորրորդ նիստը, որտեղ նորահայտ հուշարձանի կարգավիճակ է տրվել Երեւան քաղաքի Կենտրոն վարչական շրջանում գտնվող «Լեոնիդ Ազգալդյանի հուշակոթող», Արմավիրի մարզի Դալարիկ եւ Կոտայքի մարզի Կաղուտան գյուղերի «Քարայր-կացարաններ», Սոլակ գյուղի «Քնակատեղի» եւ «Ամրոց-դղյակ», Շիրակի մարզի Կառնուտ գյուղի «Քնակատեղի» եւ Վայոց Ձորի մարզի Արենի գյուղի «Արենի-2 քարայր» պատմամշակութային արժեք ներկայացնող նոր հայտնաբերված կառույցներին:

ՀՀ ԿԳՄՍ նախարարությունից Armlur.am-ին հայտնեցին, որ նիստում քննարկվել է նաեւ 21 հուշարձանի պահպանական գոտիների նախագծերին համաձայնություն տալու հարցը:

Դրական եզրակացություն են ստացել պատմության եւ մշակույթի այնպիսի կարեւորագույն հուշարձանների պահպանական գոտիների նախագծեր, որոնցից են ՀՀ Արագածոտնի մարզի Երնջատափ եւ Հարթավան գյուղերի միջնամասում գտնվող «Աստվածընկալ» եկեղեցական համալիրը (V-XIII-րդ դդ.), Շիրակի մարզի Վահրամաբերդ գյուղի «Մարմաշեն» վանական համալիրը (IX-XIII-րդ դդ.), Կոտայքի մարզի Բջնի գյուղի մի շարք եկեղեցիներ՝ Սբ Բարորություն (XII-XIII դդ.), Սբ Գեւորգ (XIX դ.), Սբ Գրիգոր լուսավորիչ (XIIIդ.), Սբ Թադեւոս առաքյալ (XIII-XIV դդ.), Սբ Հովհաննես (XIX դ.), Թուխ մանուկ (IX-X դդ.) եւ վանական համալիր (XI- XVII դդ.) եւ այլն: Սահմանված կարգի համաձայն՝ այդ գոտիները կուղարկվեն համայնքների ղեկավարների եւ տարածքային կառավարման պետական մարմինների համաձայնեցմանը:

ԼՈՒՐԵՐ

ԱԱ–2022–Ի ՖԱՎՈՐԻՏՆԵՐԸ

Անգլիական «Մանչեսթեր Յունայթեդի» 37-ամյա պորտուգալացի հարձակվող Կրիշտիանու Ռոնալդուն նշել է աշխարհի առաջնության ֆավորիտներին: «Պորտուգալիայի հավաքականն ահռելի ներուժ ունի, բայց մենք պետք է մտածենք Գանայի դեմ առաջիկա խաղի մասին: Եթե ամեն խաղում լինենք լավագույն թիմը, կհասնենք մինչեւ վերջ: Ֆավորիտներն են Բրազիլիան, Արգենտինան, Ֆրանսիան, Իսպանիան, Գերմանիան: Այս թիմերն ունեն ամենամեծ հնարավորությունները եւ մյուսների համեմատ ավելի լավ տեսք ունեն, սակայն 2016-ին Պորտուգալիան արդեն ցույց է տվել, որ կարող է զարմացնել եւ պարտադրել իր խաղը»,-ասել է Ռոնալդուն: 2016-ին Պորտուգալիան նվաճել է Եվրոպայի չեմպիոնի տիտղոսը: Աշխարհի առաջնության խմբային փուլի առաջին տուրի Պորտուգալիա - Գանա հանդիպումը տեղի կունենա նոյեմբերի 24-ին: Հ խմբում ընդգրկված են նաեւ Ուրուգվայի եւ Հարավային Կորեայի հավաքականները:

ՀԲԱԺԱՐՎԵԼ Է ՎԱՃԱՌԵԼ ՊՍԺ–Ն

Ֆրանսիայի չեմպիոն ՊՍԺ-ի քաթարցի նախագահ Նասեր Ալ-Խելաիֆին պատմել է, որ մերժել է շահավետ առաջարկ՝ հրաժարվելով 4 միլիարդ եվրոյով վաճառել ակումբը: «Մենք չենք պատրաստվում ամբողջությամբ վաճառել ակումբը, թեեւ եղել են 4 միլիարդ եվրոն գերազանցող առաջարկներ: Բայց մտածում ենք որոշակի տոկոս վաճառելու մասին: Բոլորը կարծում են, թե մենք ունենք միայն փող եւ միայն ծախսում ենք: Այդպես չէ: Մենք ակումբը գնել էինք 70 միլիոն եվրոյով, հիմա այն արժի 4 միլիոն եվրո: Մենք ունենք տարբեր առաջարկներ, սա ֆանտաստիկ բիզնես է: Ես հավատում եմ, որ մենք լավ նախագիծ ենք իրականացնում: Ֆուտբոլում հնարավոր են նաեւ սխալ որոշումներ: Մենք ազնիվ ենք եւ անում ենք հնարավոր ամեն ինչ: Կարծում եմ՝ պետք է հպարտ լինենք մեր նախագծով»,- ասել է Ալ-Խելաիֆին:

ԿԵՅՐՈՒՇԸ ԴԺԳՈՀԵԼ Է

Ֆուտբոլի Իրանի հավաքականի պորտուգալացի գլխավոր մարզիչ Կառլուշ Կեյրուշը աշխարհի առաջնության խմբային փուլի առաջին տուրի խաղում Անգլիայից կրած 2:6 հաշվով պարտությունից հետո դժգոհել է, որ իրանցի երկրպագուները ստադիոնում չեն աջակցել ազգային թիմին, որոշ դրվագներում նաեւ սուլել են: «Բոլորը գիտեն, որ Իրանում տեղի ունեցող իրադարձությունների հետեւանքով մեր խաղացողները հիմա լավագույն վիճակում չեն: Երկրի խնդիրներն ազդում են նաեւ նրանց վրա՝ կենտրոնացված լինելու տեսանկյունից: Ես երկար տարիներ գիտեմ այս խաղացողներին, նրանց երազանքն է խաղալ իրենց երկրի համար: Ես հպարտ եմ, որ այսքան ծանր խաղում նրանք կարողացան դիմադրել եւ երկու գոլ խփել: 2014-ին եւ 2018-ին մենք ունեինք երկրպագուների լիարժեք աջակցություն: Իսկ հիմա հարց է ծագում, թե ինչու են եկել այստեղ, եթե չեն աջակցում թիմին: Ավելի լավ է՝ մնային տանը: Նրանք մեզ պետք չեն»,- ասել է Կեյրուշը:

● *Նոյեմբերի 27-ին Seven Visions Hotels, The Dvin-ում տեղի կունենա՝ «Ջեյկոբ Մեյեր» նորաձեւության ցուցադրություն: Տոմսերի արժեքը՝ 15000-45000 դրամ: Սկիզբը՝ 20:00:*

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ո՞րն է ամուսինների գույքի վրա բռնագանձում տարածելը

Ռոզա Հովհաննիսյան (24 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. - Ամուսիններից մեկի պարտավորություններով բռնագանձում կարող է տարածվել միայն այդ ամուսնու գույքի նկատմամբ: Այդ գույքն անբավարար լինելու դեպքում պարտատերն իրավունք ունի պահանջելու ամուսինների ընդհանուր սեփականության մեջ պարտապան ամուսնու հասանելիք բաժնի առանձնացումը՝ դրա նկատմամբ բռնագանձում տարածելու համար:

- Ամուսինների ընդհանուր գույքի նկատմամբ բռնագանձումը տարածվում է ամուսինների ընդհանուր պարտավորություններով: Եթե դատավճռով հաստատվել է, որ ամուսինների ընդհանուր գույքը ձեռք է բերվել կամ ավելացել է ամուսիններից մեկի կողմից հանցավոր ճանապարհով ձեռք բերված միջոցների հաշվին, ապա բռնագանձումը կարող է տարածվել համապատասխանաբար ամուսինների ընդհանուր համատեղ գույքի կամ դրա մի մասի վրա:

ՀՀ աշխատանքի
եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Իրենց երեխաների պատճառած վնասի համար ամուսինների պատասխանատվությունը որոշվում է քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված կարգով: Այդ դեպքում ամուսինների գույքի նկատմամբ բռնագանձումը կատարվում է սույն հոդվածի 2-րդ մասին համապատասխան:

ԴԱՏԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ինչպես է կատարվում ոչ պատշաճ պատասխանողի փոխարինումը պատշաճ պատասխանողով:

Վարդան Սահակյան (34 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Գործի քննության նախապատրաստման կամ դատաքննության ընթացքում հայցվորի միջնորդությամբ կամ նրա համաձայնությամբ դատարանը փոխարինում է պատասխանողին:

Եթե դատարանը հանգում է այն համոզման, որ հայցը ներկայացվել է ոչ այն պատասխանողի դեմ, որը պետք է պատասխանի ըստ հայցի, ապա դատարանը կարող է հայցվորի համաձայնությամբ ոչ պատշաճ պատասխանողին փոխարինել պատշաճ պատասխանողով: Եթե հայցվորը համաձայն չէ պատասխանողին փոխարինելուն, ապա դատարանը կարող է այդ անձին ներգրավել որպես երկրորդ պատասխանող:

Ոչ պատշաճ պատասխանողին փոխարինելուց կամ գործում որպես երկրորդ պատասխանող ներգրավելուց հետո գործի վարույթը սկսվում է գործը դատաքննության նախապատրաստելու փուլից:

ՀՀ քննչական կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Պատասխանողին փոխարինելու կամ պատշաճ պատասխանողին որպես երկրորդ պատասխանող ներգրավելու մասին դատարանը կայացնում է որոշում:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Երեւանում

Ծնվել է 44-օրյա պատերազմում զոհված պահեստազորային Վահե Կարապետյանի եղբայրը: Վանը ծնվել է նոյեմբերի 17-ին «Էրեբունի» բժշկական կենտրոնում, 2 կգ 400 գրամ քաշով եւ 46 սանտիմետր հասակով:

Վահեի մայրը՝ 49-ամյա Անահիտ Մկրտչյանը, ասում է՝ իրականացրել է որդու ամենամեծ երազանքը: «Վահես նույնիսկ բանակից էր ամեն օր զանգում ու խնդրում, որ երեխա ունենանք: Ասում էր՝ մա՛մ ջան, բանակից գամ, նորությունն անկողնում պառկած լինի: Հիմա Վահես երկնքից տեսնում է, որ ես ու ամուսինս իրականացրել ենք իր ամենակարեւոր նպատակներից մեկը»,- ասում է մայրը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը
Բաժանորդագրվելու
համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________
Ազգանուն՝ ____________
Առաքման հասցե՝ ____________
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ ____________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **22.11.2022**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում

Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: